ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-18/35*** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի հուլիսի 25-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-18/35-7»*** ծածկագրով պայմանագրում **2018 թվականի հոկտեմբերի 31-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահինի վանքի (Սբ Ամենափրկիչ եկեղեցու) նորոգման աշխատանքների կատարման ժամկետը Կապալառու կազմակերպության հետ կնքված համապատասխան համաձայնագրով երկարաձգվել է մինչև 30.11.2018 թ.-ը, ինչով պայմանավորված առաջացել է նշված աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման ժամկետի փոփոխության անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում ծառայության մատուցման ժամկետի ավարտը՝ «01.11.2018 թ.» բառերը փոխարինվել են «30.11.2018 թ.» բառերով:

Փոփոխության հիմնավորում N 1: ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-18/35-7» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «31» 10 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՀԱՆԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Հովսեփյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի հուլիսի 25-ին կնքված ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահինի վանքի (Սբ Ամենափրկիչ եկեղեցու) նորոգման աշխատանքներ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման N «ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-18/35-7» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում ծառայության մատուցման ժամկետի ավարտը՝ **«01.11.2018 թ.»** բառերը փոխարինել **«30.11.2018 թ.»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն	«ԱՀԱՆԱ» ՍՊԸ,
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վ. Վաղարշյան 15շ. բն. 5,
Կառավարական շենք N 2,	հեռ.՝ 010-27-11-31, 093-59-89-98,
հեռ.՝ (011) 58-51-78	ՀՎՀՀ՝ 00080002
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012979	հ/հ՝ 163058566908,
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մասնաճյուղ,
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ս. Մուրադյան	_____ Հ. Հովսեփյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.